«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Ընտանիքի դերը սաների հուզակամային ոլորտի զարգացման վրա

Հաստատություն ՝ *«ԵՐԵՎԱՆԻ Հ. 93 ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

Դաստիարակ ՝ Նելլի Տոնոյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

Ներախություն…….....…1
ԳլուխI Ընտանիքի դերը սաների հուզակամային ոլորտի զարգացման վրա…… 2-5
Գլուխ II Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության ձևերը.....……..6-10
Գլուխ III Ընտանիքի հետ մանկապարտեզի կողմից տարվող աշխատանքի խնդիրներն ու կազմակերպման ձևերը…….....……..10-13
Եզրակացություն…….....14
Գրականություն …….....15

Ներածություն

Երեխայի դաստիարակության հոգևոր արժեքների ձևավորման, հուզակամային ոլորտների զարգացման գործում մեծ դեր է խաղում ընտանիքը, քանի որ դա այն առաջին օղակն է, որտեղ երեխան ապրում և մեծանում է:

Ընտանիքում է ձևավորվում երեխայի ընտանեկան և հոգևոր արժեքները, հայրենասիրությունը, այդ իսկ պատճառով ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է մասնակցի դաստիարակությանը: Եվ շատ կարևոր է երեխայի ընտանիքի կապը այն կառույցների հետ, որտեղ նա հաճախում է:

Ընտանիքի դերը սաների հուզակամային ոլորտի զարգացման վրա

Գլուխ I [ՆԴ Մանկավարժություն 2008]

Ընտանիքը հասարակության առաջին սոցիալական օղակն է, ուր դրվում են երեխայի անձնավորության հիմքերը և կառուցվում է նրա սոցիալական կերպարը: <<Ընտանիքը երեխայի մթնոլորտն է, նրա մեջ աճում և զարգանում են երեխայի մտավոր ուժերը, նրա հոգեկան զորությունները և բարոյական հատկությունները, բոլորն այն ճափով, ինչ չափով նպաստում է դրան գերդաստանի կրթողական ազդեցությունը և այն ձևով, ինչ կերպարանք է տալիս նրան դաստիարակող ոգին>> (Ռաֆֆի): Վերջապես <<երեխան ընտանիքի հայելին է>> սահմանում դարձած արտահայտությունը լիովին նկարագրում է և կարևորում ընտանիքի անփոխարինելի դերը երեխայի զարգացման և նրա անձնավորության ձևավորման գործու: Ընտանիքի հիմնական գործառույթներն են՝

ա. Վերարտադրողական
բ. Սոցիալ-տնտեսական
գ.Սոցիալանացման
դ. Հոգեթերապեվտիկ
ե. Դաստիարակչական

Ընտանիքի և ընտանեկան դաստիարակության դերն հատկապես ազդեցիկ է և կարևոր երեխայի ներդաշնակ գոյատևման ու զարգացման գործում: Հոգեբան Ա.Ն.Լեոնտևը նշում է, որ <<նախադպրոցական տարիքի երեխան չափազանց զգայուն է իրեն մշտապես շրջապատող հարազատ և մտերիմ մարդկանց հանդեպ, ընկալում և ընդունում է միայն նրանց դաստիարակչական ներգործությունը և դժվարությամբ է համակերպվում օտարների ներկայության հետ>>:
Ընտանեկան դաստիարակության միջոցով լուծվում են երեխայի անձնավորության կայացման մի շարք խնդիրներ:
Դրանք են.
ա. Ստեղծվում են երեխայի լիարժեք զարգացման համար բոլոր հնարավոր պայմանները:
բ. Ապահովվում է երեխայի հոգեբանական պաշտպանվածությունը և ձևավորվում վստահություն աշխարհի հանդեպ:

գ. Զարգանում է երեխայի ինքնագիտակցությունը, ձեռք է բերվում սեռային պատկանելիության և արժանապատվության զգացողություն:

դ. Ձևավորվում են կյանքի հմտություններ և դրական սովորություններ;
ե. Յուրացվում են սոցիալ-բարոյական արժեքներ, ձևավորվում է կենցաղային մշակույթ;
զ. Փոխանցվում են և յուրացվում ընտանեկան փոխհարաբերությունների նմուշներ, ձևավորվում է ընտանիքի պահպանման և դաստիարակության որոշակի օգտակար փորձ:
Նշված խնդիրների կարևորությունը պահանջում է ընտանեկան դաստիարակության մանկավարժական մոտեցումների հստակեցում և հատուկ մշակում, ընտանեկան դաստիարակության կազմակերպման եղանակների հուշում և տարածում ծնողական միջավայրում: Ընտանեկան դաստիարակության գործընթացն արդյունավետ է,երբ կազմակերպվում է ոչ թե կամայական եղանակներով, այլ մտածված և հետևողական մանկավարժական աշխատանքի միջոցով:
Ընտանեկան դաստիարակությունը մանկավարժական համակարգ է՝ ուղղված կրթադաստիարակչական խդիրների իրականացմանը ընտանիքի բոլոր անդամների համատեղ մանկավարժական ջանքերի շնորհիվ: Ժամանակակից մանկավարժությունը դաստիարակության համակարգում առավել կարևորում է ընտանեկան դաստիարակությունը ընդունում է դրա գերակայությունը համարելով ընտանիքը բազմաբնույթ սոցիալական խումբ, հիմնվելով ընտանիքի դաստիարակչական ներգործության լայն հնարավորությունների վրա: Տ.Ա. Մարկովան երկար տարիներ ուսումնասիրելով ընտանեկան դաստիարակության առավելությունները, առանձնացնում է ընտանեկան դաստիարակության երեք այն գործոնները, որոնք բնութագրում ե ընտանեկան դաստիարակության հիմնական առանձնահատկությունները: Առաջին առանձնահատկությունը վերաբերում է ընտանեկան դաստիարակաության մթնոլորտին: Ընտանեկան դաստիարակությունն ուղեկցվում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների սիրով և նվիրվածությամբ, փոխադարձ քնքշությամբ և հավատարմությամբ: Ընտանիքում առկա են անտեսանելի, ներքին հուզական կապեր, որոնք ապահովում են երեխայի անվտանգ և պաշտպանված կյանքը, ինչը երեխայի մեջ վստահություն է առաջացնում իր և աշխարհի հանդեպ:
Ընտանեկան երկրորդ առանձնահատկությունը մանկավարժական ներգործության մշտական բնույթն է: Երկարատև ներգործելու հնարավորությունը ծնողներին օգնում է փորձարկել և ընտրել դաստիարակության տարբեր եղանակներ,շտկել թույլ տված սխալները, վերանայել և վերակառուցել ընտանիքում սովորական դարձած, հաճախ կարծրացած փոխհարաբերությունները:
Ընտանեկան դաստիարակության հուզական և կայուն բույթը նպաստում է երեխայի նյարդային համակարգի հավասարակշռությանը, հոգեկան ներդաշնակությանը և հանգիստ ու ապահով կենսակերպի հաստատմանը:
Ընտանեկան դաստիարակության երրորդ առավելությունը երեխային՝ ընտանեկան խնդիրների լուծմանը, լիիրավ մասնակից դարձնելու հնարավորությունն է:
Երեխան, ինչպես և հայրկը և մայրիկը, ընտանիքի լիարժեք անդամ է, հետևաբար ունի իրավունք մասնակցելու ընտանեկան գործունեության քննարկման ու լուծմանը: Նշված հնարավորությունը երեխային ոգևորում է և նրա մեջ ցանկություն առաջացնում

հավասարաչափ մասնակցելու ընտանիքի բոլոր գործերին: Երեխան հաճույքով և ամենայն պատասխանատվությամբ է կատարում իրեն վստահված բոլոր հանձնարարությունները, որոնք աստիճանաբար կարող են վերածվել պարտականությունների:
Ընտանեկան դաստիարակության հիմքում ընկած է ծնողներին և ընտանիքի մյուս անդամներին ընդօրինակելու, նրանց նմանվելու բնազդային հակվածությունը, որը նպաստում է տվյալ ընտանիքին բնորոշ <<կյանքի փիլիսոփայության>> ընկալմանը և կյանքի հանդեպ համարժեք վերաբերմունքի ձեռքբերմանը: Ծնողներին նմանվելով երեխան յուրացնում է նաև սեռային տարբերություններն ու վարքագիծը:
Ընտանեկան դաստիարակության սկզբունքները գրեթե չեն տարբերվում դաստիարակության ընդհանուր սկզբունքներից: Դրանք են.
ա. մարդասիրության և գթասրտության
բ. երեխայի հանդեպ սիրո ու հարգանքի
գ. ընտանեկան փոխհարաբերությունների կառուցվելիս լավատսության
դ. երեխայի հետ բաց և վստահելի հարաբերությունների հաստատման
ե. երեխայի ներկայացվող պահանջների միասնականության
զ. ծնողների հեղինակության անսասանության, նրանց կարծիքի գերակայության
է. հետևողականության և պահանջկոտության
ը. երեխայի ընտանիքի գործունեության ակտիվ ներգրավելու:
Յուրաքանչյուր ընտանիք փորձում է ապահովել զավակների բարեյաջող ապագան, ջանք և եռանդ չի խնայում այդ նպատակին հասնելու համար:
Հայ ընտանիքներին ավանդաբար բնորոշում են ընտանեկան դաստիարակության որոշ թերություններ, որոնք կարիք ունեն հաղթահարման: Փորձենք նշել հիմնականները.
ա. երեխաների ֆետիշացումը, նրանց քմահաճույքների անհապաղ կատարումը,
բ. ծնողների հեղինակության արժեզրկումը, նրանց կարծիքի և որոշումների անտեսումը,
գ. դաստիարակության ավանդական մոտեցումների, ճնշող դաստիրակության գերակայությունը,
դ. երեխայի ներկայացվող պահանջների անկայունությունը, միասնական բացակայությունը,
ե. դաստիարակության խոսքային եղանակների, քարոզչության գերակայությունը, երեխայի ինքնուրույնության անտեսումը,
զ. հուզական դրսևորումների կտրուկ փոփոխությունը, հուզական անկայունությունը դաստիարակության ընթացքում,
է. կենցաղային մշակույթի ցածր մակարդակը,
ը. դաստիարակության փորձը մանկավարժական գիտելիքներով հարստացնելու, նորն ընդունելու անկարողությունը, մանկավարժորեն կրթվելու ցանկության բացակայությունը:
Հաճախ երեխայի հանդեպ ծնողական սիրո գերագույն դրսևորումներն անցնում են բոլոր սահմանները և վերածվում գերհովանավորչության, այն ընտանեկան դաստիարակության ընթացքում հանդիպող ամենատարածված սխալն է:

Գերիհովանավորչության սկզբունքով ընտանեկան դաստիարակության պայմաններում երեխան գտնվում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների ուշադրության կենտրոնում, որոնք մշտապես հետևելով երեխային և կարգավորվելով նրա գործողությունները, դաստիարակության ընթացքում անընդհատ ներկայացնում են նրան տարբեր պահանջներ, արգելքներ և հաճախ խստագույն հրահանգներ:
Ընտանեկան անընդունելի դաստիարակության հաջորդ տեսակը <<մոխրոտի>> սկզբունքով դաստիարակությունն է: Դաստիարակության այս տեսակին բնորոշ է երեխայի հանդեպ անտարբեր, սառնասիրտ վերաբերմունքը: Երեխան պարզ հասկանում է, որ իրեն չեն սիրում, բոլորովին չունեն ցանկություն զբաղվելու իր հետ, հաճախ զգում է, որ նույնիսկ խանգարում և անհանգստություն է պատճառում:
Դաստիարակության մյուս տեսակը <<դաժան դաստիարակություն>> է: Դաժան դաստիարակության հիմքում ընկած է չնչին մեղավորության համար խստագույն պատժելիության սկզբունքը, որը ձևավորվում է վախով պայմանավորված <<օրինակելի>> վարքագիծ: Դաժան դաստիարակության դեպքում երկատվում է երեխայի վարքագիծը, մտածելակերպը և ձևավորվում է նենգ և աշխարհին բացասաբար տրամադրված անձնավորություն:
Երեխան լույս աշխարհ է գալիս և դրանով իսկ երջանկություն է պարգևում ծնողներին ու հարազատներին, նրա գոյությունն արդեն ամենամեծ բարոյական արժեքն է: Բարենպաստ ընտանիքում երեխային սիրում են զուտ այն բանի համար, որ նա կա, ուղղակի ծնվել է՝ ծնողների հեռահար ակնկալիքներից անկախ: Ծնվել է ինքնատիպ անկրկնելի մի անհատ, որը երջանիկ ապրելու իրավունք ունի, սիրող ծնողները կոչված են օգնելու և ուղղորդելու նրան:
Բարենպաստ ընտանիքներին բնորոշ է բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտ, որն ինքնին դաստիարակող է: Բարենպաստ ընտանիքներում դաստիարակության գործընթացն իրականացվում է համատեղ կենսագործունեության ընթացքում, առօրյա խնդիրների և հոգսերի փոխհամաձայնեցման միջոցով և չի դիտվում իբրև հատուկ պլանավորված և պարբերաբար կազմակերպվող աշխատանք: Ցավոք, ընտանիքների մի զգալի զանգված դասվում է անբարենպատ ընտանիքների խմբին: Անբարենպաստ են համարվում այն ընտանիքները, որոնք գոհատևում են դրական բարոյահոգեբանական մթնոլորտի բացակայության պայմաններում: Ընտանիքում հաստատվում է բացասական հոգեբանական համակեցություն (սիմբիոզ), որին համապատասխանում են որոշակի հարաբերություններ և վարքագծային դրսևորումներ: Երեխան մեծանում է անկայուն և անկանոն միջավայրում, որը նրան պարտադրում է հարմարվել և լռել:

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության ձևերը

Գլուխ II [ՆԴ. Մանկավարժություն 1992թ.]

Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Համագործակցության արդյունքում թե ծնողը, թե դաստիրակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հակակրանքների մասին: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստ են ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության:
Առաջարկում ենք մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր ու արդյունավետ համագործակցության հետևյալ ուղղությունները

Շաբաթական կամ ամսական լրատումներ.

Տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ նորրավված են եղել երեխաները:

Ծնողական ժողովներ.

Քննարկվում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերի առնչվող մտահոգությունների մասին հարցեր:

Ծնողական համաժողովներ.

Դրանց նպատակը ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակումն է:

Առավոտյան հանդիպումների ընթացքում ծնողներին նախապես հայտնվում են ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատումներում:

Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին.

Դաստիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը:
Կարևոր տեղ է հատկացվում ծնող-մանկավարժ արդյունավետ ժողովների անցակցմանը: Դրանց նախապատրաստումը դաստիարակները պետք է դիտեն որպես մի շարունակական գործընթաց:

Ժողովների անցկացման ուղենիշներ

Ճանաչելով ընտանիքներին դուք ավելի հեշտությամբ կհարմարվեք ծնողների միջև առկա անհատական տարբերություններին:
Ծնողների վերաբերմունքն ըստ իրենց կրթության և փորձի՝ կարող է տատանվել գոհունակությունից մինչև թերահավատություն: Նախապես իմանալով ժողովների նկատմամբ ծնողների վերաբերմունքի այս տարբերությունները՝ յուրաքանչյուր իրադարձությունից դուրս գալու համար ձեզ ավելի պատրաստ կզգաք:
Ժողովների մասին հայտարարությունից և ընդհանուր տեղեկատվությունից բացի յուրաքանչյուր ծնողի կոնկրետ տեղեկություններ հաղորդեք ժողովին առնչվող ձեր նպատակների մասին: Այդ կերպ նրանք մինչև ձեր հանդիպումը մտածելու բան կունենան:

Ժամանակ հատկացրեք ժողովի համապատասխան միջավայրի ստեղծմանը: Ստեղծեք ընկերական մթնոլորտ թեթև հյուրասիրություն առաջարկելով: Ծնողների հետ քննարկեք երեխային առնչվող սոցիալական, հուզական, կրթական, ճանաչողական և ֆիզիկական նպատակները: Բացատրեք, թե ինչպե՞ս կարելի է հասնել դրանց:

Ժողովներ վարելիս հարկավոր է ձգտել՝

ա. օգնել ծողներին՝ իրենց հանգիստ, հարմարավետ և ցանկալի հյուր զգալ, քանի որ մանկապարտեզը մանկավարժի <<տարածքն է>>,

բ. հաղորդակցվել ծնողների հետ՝ իրենց մակարդակին համապատասխան, խուսափել նեղ մասնագիտական բառապաշարի օգտագործումից,

գ. շեշտը դնել երեխայի բնավորության դրական հատկանիշների վրա,

դ. ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ, որոնցով նրանք կարող են տանը օգնել երեխաներին:

Տնային այցելությունները մասնագետներին երեխաների ու նրանց ծնողների կյանքի պայմանների մասին անմիջական տվյալներ ստանալու լրացուցիչ հնարավորություն են ընձեռնում: Կարելի է տնային այցելություններն այնպես կազմակերպել, որ ծնողի ներկայությունը քիչ կամ բոլորովին անհրաժեշտ չլինի: Սա հնարավոր է հատկապես այն դեպքում, երբ նպատակը տունը խմբասենյակին նմանեցնելն է կամ ուսումնական կենտրոնների հենքով մշակված ծրագիրը տան պայմաններում իրականացնելը:

Այստեղ նույնպես կիրառվելու է երեխայակենտրոն մոտեցումը, որը չի պահանջում ծնողների ներկայությունը:

Գոյություն ունեն մանկապարտեզ-ընտանիք կամ ընտանիք- դպրոց արդյունավետ համագործակցության երկու հիմնական ուղիներ՝

1.հետևողական, հստակ, երկկողմանի հաղորդակցություն,

2. ծնողների ներգրավման բազմազան միջոցներ,

Մանկապարտեզ-ընտանիք կապը հիմնվելու է փոխադարձ վստահության վրա: Երկկողմանի հաղորդակցության կանոնավոր հնարավորությունների միջոցով ծնողներն ու ուսուցիչները սերտորեն համագործակցում են ՝ ի շահ երեխաների բնականոն զարգացման:

Հաց ընտանիքը պետք է նոր սերնդին դաստիարակի նոր հոգեբանությամբ, նպատակ դնելով նրանց մեջ արմատավորել ազատության և հայրենասիրության գաղափարները, որպեսզի երեխաները կարողանան գնահատել ազգային արժանիքները, ազգության պահպանման գործոնները, առաջին հերթին՝ մայրենի լեզուն՝ չմոռանալով նաև անձնական մի շարք բարեմասնություններ բարեխղություն սատնձնած աշխատանքի նկատմամբ, ազնվություն, շիտակություն, արդարամտություն առօրյա փոխհարաբերություններում, զսպվածություն և այլն:

Դաստիարակելով, իրենց երեխաներին, ծնողները ձևավորում են ապագա քաղաքացիներ, ապագա հայրեր ու մայրեր, և այդ գործի հաջողության համար շահագրգռված են ոչ միայն իրենք, այլև հասարակություն ամբողջովին վերցրած: Ընտանեկան դաստիարակության դժվարությունների հաղթահարմանը նպաստում է ընտանիքի սերտ համագործակցությունը նախադպրոցական կրթական

հաստատությունների հետ: Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության հիմքում ընկած է երկու սկզբունք.
1. նախադպրոցական կրթական հաստատության ներքին ներգործությունների հանդեպ բաց լինելու,
2. նախադպրոցական կրթական հաստատության արտաքին ներգործությունների հանդեպ բաց լինելու:
Առաջին սկզբունքը ենթադրում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների ակտիվ ներգրավում մանկապարտեզի մանկավարժական գործընթացին: Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունն օգնում է երկուստեք ճանաչելու և հաշվի առնելու երեխայի դաստիարակության իրական պայմանները՝ այն արֆյունավետ կազմակերպելու նպատակով:
Ծնողներն իրենց հերթին ձեռք են բերում չափազանց կարևոր մանկավարժական գիտելքիներ և կարողանում են գնահատել մանկավարժի ծանրագույն աշխատանքը:
Համագործակցության երկրորդ սկզբունքը կարևորում է մանկապարտեզի դեպի դուրս բերելու անհրաժեշտությունը: Մանկապարտեզը պատրաստ պիտի լինի համագործակցելու համայնքի բոլոր սոցիալական ինստիտուտների հետ: Պարտադիր է մանկապարտեզի համագործակցությունը տարածքի դպրոցների, երաժշտական և սպորտային դպրոցների, մանկական ակումբների հետ:
Աճող սերնդի դաստիարակության և կրթության հաջողությունների պայմանավորված են բոլոր սոցիալակն ինստիտուտների միջև հաստատվղ փոխվստահելի և փոպատասխանատու համագործակցությամբ: Մանկապարտեզի և ընտանիքի փոխադարձ կապի ձևերը պարբերաբար վերանայվում և լրամշակվում են: Ավանդական դարձած ձևերին ավելանում են ժամանակակից եղանակները, որոնք բխում են հասարակության նախադպրոցական կրթությանը ներկայացվող այսօրվա պահանջներից:
Ներկա ժամանակաշրջանում աճող սերնդի դաստիարակությունը հատուկ հոգատարության առարկա է, որի հաջողությունը որոշվում է նորովի աշխատելու, երեխաներին ազգայինով ուսուցանելու, դաստիարակելու, հնառճ մեթոդներից ձերբազատվելու և հասարակական դաստիարակության և ընտանիքի ներգործության միասնությամբ: Հասարակական և ընտանեկան դաստիարակության միասնության պայմաններում առաջատար դերը պատկանում է հասարակական դաստիարակությանը: Հասարակական դաստիարակության առաջատար դերը պայմանավորված է նրանով,որ երեխայի դաստիարակությունն իրականացվում է հասակակիցների շրջապատում, ուր նա ձեռք է բերում հասարակական վարքի ունակություններ, որ այդ դաստիարակությունը կրում է գիտականորեն հիմնավորված բնույթ, իրականցվում է հատուկ ստեղծված մանկավարժական միջավայրում և մասնագիտական պատրաստվածություն ունեցող մասնագետ մանկավարժների կողմից:
Հասարակակն դաստիարակության առաջատար դերի գիտացումն ամենևին չի նվազեցնում ընտանիքի դերը երեխայի կյանքում: Ըստ 19-րդ դարի հայ մանկավարժ Սոֆյա Բաբայանի՝ մանկական առաջին հասարակական միջավայրը դա ընտանիքն է,

որտեղ սկզբնավորվում է զարգացումը: Ընտանեկան միջավայրի հետ են կապված նրանց մանկական անջնջելի տպավորությունները, հիշողությունները, ապրումները: Ընտանիքներում կուտակված է որոշակի դարական փորձ երեխաների դաստիարակության ուղղությամբ: Նրանք իրենց երեխաներին դաստիարակում են հասարակության պահանջներին համապատասխան, նրանց մեջ ձևավորում հայրենիքի նկատմամբ սեր և բարոյական վարքի անհրաժեշտ ունակություններ: Սակայն դեռևս կան ընտանիքներ, որոնցում թույլ են տրվում լուրջ սխալներ երեխաների դաստիարակության գործում: Դրա հետևանքը լինում է այն, որ երեխաները ստանում են սխալ դաստիարակություն և առաջանում են նրանց վերադաստիարակելու բարդ հիմնահարցը: Այդ սխալների հիմնական պատճառը ծնողների մանկավարժական կուլտուրայի անբավարար մակարդակն է: Չէ որ իր երեխային լավ մարդ, ապագա քաղաքացի դարձնելու ցանկությունը քիչ է, պետք է կարողանալ նաև այդ իրագործել: Ծնողները պետք է միշտ հիշեն, որ երեխայի դաստիարակությունը աչ թե անձնական գործ է, այլ քաղաքացիական պարտքի կատարում հասարակության առջև: Դստիարակելով իրենց երեխաներին ծնողները ձևավորում են ապագա քաղաքացիներ, ապագա հայրեր ու մայրեր և այդ գործի հաջողության համար շահագրգռված են ոչ միայն իրենք այլև հասարակությունը ամբողջովին վերցրած:
Երեխաների դաստիարակությունը ընտանիքում կարող է հաջող ընթացք ունենալ միայն այն դեպքում, երբ ծնողները պարզ պատկերացնում են դրանց նպատակը և խնդիրները, իրականացման ուղիները ու միջոցները: Ինչպես նշել է հայ ականավոր գրող և մանկավարժ Ղ. Աղայանը, որ ծնողները պետք է լավ պատկերացնեն, թե ինչպիսի մարդ ուզում դաստիարակել: Երեխային դպրոցին նախապատրաստելիս յուրաքանչյուր ծնողի և մանկավարժի պարտականություն է քաջ ծանոթ լինել հայոց ազգային կրթական ծրագրին: Խնողը դաստիարակի հետ պետք է ձեռնամուխ լինի երեխայի վերացական մտածողության և կերպարվեստային մտածողության զարգացմանը, որը պետք է ընդանա բնականոն ձևով խաղերի հիման վրա: Երեխային ճիշտ դաստիարակելու համար պետք է նրան լավ ճանաչել, հասկանալ, կարողանալ իր ողջ էությամբ և խառնվածքով համեմատել ընտանիքի մյուս երեխաների հետ, հաշվի առնել յուրաքնչյուրի տարիքային և անհատական առանձնահատկությունները, իսկ այդ ամենի համար անհրաժեշտ են մանկավարժական գիտելիքներ, որոնք ծնողին կօգնեն ճիշտ վերլուծելու երեխայի վարքը, արարքները ինչպես նաև ճիշտ ուղիներ ընտրելու նրա դաստիարակության համար:
Ծնողները երեխայի կողմից պետք է վայել են բարձր հեղինակություն, առանց որի հնարավոր չէ նրանց դաստիարակությունը: Իսկ ինչի վրա է հիմնված ծնողական հեղինակությունը: Ըստ մանկավարժ Գուրգեն Էդիլյանի ծնողները պետք է ունենան ամուր, հետևողական, համբերող և զսպված բնավորություն, ունենան պարտականության զգացում: Լավ իմանան, որ ընատնիքը երեխայի համար հոգևոր կյանքի աղբյուր է, նրանից է բխում մեծ հաճույքի և տհաճության ապրումները: Առավել հեղինակություն են վայելում այն ծնողները, ովքեր հաջողությամբ են զուգակցում իրենց աշխատանքային և հասարակական գործունեությունը համատեղել ընտանեկան

պարտականությունների հետ: Երեխայի նկատմամբ ծնողների վերաբերմունքի հիմքում ընկած է սիրո զգացումը: Անհրաժեշտ է, որպեսզի ծնողական սերը արտահայտվի չափի զգացումով, ոչ կուրորեն, երեխայի անձը հարգելու հետ:

Ինչպես ասվեց, երեխայի նկատմամբ ճիշտ վերաբերմունքը կայանում է նրանում, որ փախաքշանքը , մեծահոգությունը և բարությունը զուգակցվեն հետևողականության հետ՝ հաշվի առնելով երեխայի հնարավորությունները:Երեխայի հետ ծնողների փոխհարաբերության մեջ հանդարտ, հավասարակշռված տոնը պետք է զուգակցել վճռականության և գործունյա պահանջի հետ, իսկ դա նշանակում է երեխայի մեջ տեսնել մարդու, հարգել նրա անձը չնայած նրա տարիքին, նվազ կենսափորձին և պակաս գիտելիքներին: Դրա համար անհրաժեշտ է ճանաչել նրանց հոգևոր կյանքը, որն արտահայտվում է գործողության մեջ, իսկ այդ գործողությունը խաղն է: Յուրաքանչյուր ծնող պետք է իմանա նաև երեխայի դիտողականության զարգացման նշանակությունը: Ով է օգնելու ծնողին, որպեսզի նա տիրապետի դաստիարակության արվեստին: Դրանում կարևոր դեր ունեն նախադպրոցական մանկավարժները: Վերջիներս միասնություն սահմանելով ընտանեկան և հասարակական դաստիարակության գործում գործնական օգնություն են ցույց տալիս երեխաներին ճիշտ դաստիարակելու գործում:

Գլուխ III

Ընտանիքի հետ մանկապարտեզի կողմից տարվող աշխատանքի խնդիրներն ու կազմակերպման ձևերը

Ընտանիքի հետ ՆԴ՝ հիմնարկների գործունեությունը շատ կարևոր ու բարդ բնագավառ է: Այն ուղված է հետևյալ կարևոր խնդիրների լուծմանը՝
ա. Սահմանել երեխայի դաստիարակության միասնություն:
բ. Կազմակերպել ծնողների մանկավարժական լուսավորության գործը, ուսումնասիրել և տարածել ընտանեկան դաստիարակության առաջավոր փորձը:
գ. Ծնողներին ծանոթացնել նախադպրոցական հիմնարկի ուսումնա-դաստիրակչական աշխատանքներին:
Վերը նշված խնդիրների իրականացմանն է ուղղված մանկապարտեզի կողմից ծնողների շրջանում տարվող ողջ աշխատանքը:
Դաստիարակի պարտականության մեջ է մտնում նաև ծնողներին տրվող օգնությունը՝ իրենց երեխաների մասին գիտելքիներ ձեռք բերելու, նրանց զարգացման օրինաչափություններն իմանալու, դաստիարակչական ներգործության եղանակներին տիրապետելու, նրանց դպրոցական ուսուցմանը նախապատրաստելու գործում տրված ցուցումներն ու խորհուրդները կատարելու խնդիրը:
Դաստիարակն այցելելով երեխայի ընտանիքը, զրուցելով ծնողների հետ, դիտելով երեխայի վարքը՝ նշում է այն դրական փորձը, որ կա այդ ընտանիքում:

Կան ընտանիքներ, որտեղ երեխաների աշխատանքային դաստիարակության գործը ավելի լավ է դրված, կամ մեկ այլ ընտանիքում գեղագիտական դաստիարակության ուղղությամբ լավ փորձ կա: Ընտանեկան դաստիարակության դրական փորձի փաստերի կուտակումը հիմք է տալիս ընդհանրացնելու այն և համապատասխան հանձնարարականներ առաջարկելու բոլոր ծնողներին: Ընտանիքում և մանկապարտեզում երեխաների դաստիարակությամ միասնությունն ապահովելու համար ծնողները պետք է լավ պատկերացնեն, թե ինչ է իրենց ներկայացնում մանկապարտեզը, մսուրը, մսուր-մանկապարտեզը, ինչպես է կազմակերպվում երեխաների կյանքը, ինչպես են զբաղվում երեխաները պարապմունքների ժամանակ և այլն:
Որպեսզի նախադպրոցական հմնարկի աշխատանքն ընտանիքի հետ տա կոնկրետ արդյունք, նպաստի ծնողների մանկավարժական կուլտուրայի բարձրացմանը, ինչպես

նաև սահմանվի դաստիարակչական աշխատանքների միասնություն, անհրաժեշտ է պլանավորված, նպատակաուղղված և պարբերաբար ընթացող աշխատանք: Ընտանիքի հետ տարվող աշխատանքի նպատակաուղղվածությունը կայանում է նրանում, որ ամեն մի զրույց, հանդիպում, զեկուցում, վահանակ ուղղված լինի որոշակի նպատակի: Իսկ ընտանիքի հետ տարվող աշխատանքի պլանայնությունն ու պարբերականությունը ենթադրում է անընդհատություն, հիմնահարցերի հետևողական բարդացում ու ընդլայնում, երեխայի անձի ձևավորման նկատմամբ կոմպլեքսային մոտեցում, նրա ֆիզիկական, մտավոր, բարոյական և աշխատանքային, ինչպես նաև գեղագիտական դաստիարակության միասնություն և փոխներգործություն: Ծնողների մանկավարժական լուսավորության գործն առավել արդյունավետ կլինի այն դեպքում, երբ այն կրի կոնկրետ բնույթ: Այդ նպատակով դաստիարակները ծնողներին օգնում են հասկանալու, թե ընտանիքը ինչպես պետք է կիրառի տեսական և մեթոդամանկավարժական ընդհանուր դրույթները, որոնք շարադրվում են զեկուցումներում, դասախոսություններում, խորհրդակցություններում: Ծնողներին խորհուրդներ և հանձնարարականներ տալու համար դաստիարակը պետք է շատ լավ իմանա յուրաքնչյուր երեխայի տարիքային, անհատական առանձնահատկությունները, ընտանիքի պայմաններ, կյանքը: Արժեքավոր ու օգտակար են լինում այն զրույցները, որոնք կազմակերպվում են որոշակի խմբի ծնողների հետ, որոնց միավորում է մեկ ընդհանուր խնդիր: Ասենք, մեկ երեխա ունեցողները, միայնակ մայրերը: Դաստիարակը հանդիպում է միայն հայրերի հետ, տատիկների ու պապիկների հետ և այլն: Դաստիարակի հեղինակությունը ծնողների աչքում բարձր է լինում այն դեպքում, երբ նրանք նրա մեջ տսնում են գիտակ, բանիմաց մասնագետի, կուլտուրական ու հարգալից մարդու:

Իսկ ծնողի նկատմամբ դաստիարակի վերաբերմունքի հիմքում ընկած է ծնողի հեղինակութունը՝ որպես աշխատող, որպես իր սանի հայր կամ մայր, որը ձգտում է մշտապես համագործակցել մանկավարժների հետ՝ իր երեխայի դաստիարակության հաջողության համար: Ահա թե ինչու դաստիարակտ չպետք է փորձի խրատել ծնողին, կարդալ բարոյախոսություն, նրանից պահանջել այն, ինչը իր անմիջական պարտականությունն է: Միշտ էլ փոխադարձ քաղաքավարի վերաբերմունքը բարենպաստ պայմաններ է ստեղծում ճիշտ դաստիարակության համար: Երեխայի ընտանիքին լավ ծանոթանալու, նա կայնքի ու դաստիարակության պայմաններին լավատեղյակ լինելու համար դաստիարակն օգտագործում է ծնողի հետ անհատական աշխատանքի տարբեր ձևեր՝ զրույց, կոնսուլտացիա, այցելություն, ընտանիք, ծնողների հրավիրում մանկապարտեզ, առանձին գրառումներ, շարժական թղթապանակներ և այլն:
Ծնողի կամ ընռանիքի այլ անդամի հետ անցկացվող զրույցները դաստիարակը վարում է նախապես և հատուկ նախապատրաստված է և այն նշում է իր աշխատանքային պլանում: Առավոտյան զրույցները համեմատաբար կարճատև են, սակայն կարևոր

նշանակություն ունեն երեխայի ինքնազգացողությունը պարզելու, տրամադրությունը բարձրացնելու, դաստիարակի նկատմամբ վստահություն ներշնչելու առումով:
Ծնողների համար նախատեսված կոնսուլտացիաները պետք է անցկացնել այն ժամանակ, երբ հասունանում է նրանց հետ ավելի մանրամասն ու հիմնավոր խոսելու պահը, որպեսզի վերլուծվեն այնպիսի սխալներ, որոնք թույլ են տրվում ծնողների կողմից մանկապարտեզի հետ սերտ կապի մեջ չլինելու պատճառով:
Կոնսուլտացիաների ժամանակ դաստիարակը տալիս է մասնագիտորեն հիմնավորված ու համոզիչ խորհուրդներ, ինչպես նաև հանձնարարականներ՝ սխալներն ու թերությունները վերացնելու նպատակով:
Կոնսուլտացիա անցկացնելու նախաձեռնությունը կարող է լինել ինչպես դաստիարակի, այնպես էլ ծնողի կողմից: Ըստ որում, կոնսուլտացիայի դրական արդյունքը կախված է այն բանից, թե որքանով է դաստիարակը քաջատեղյակ երեխայի դաստիարակության դրվածքին տվյալ ընտանիքում, թե որքանով են նրա խորհուրդները և հանձնարարականները մասնագիտորեն ճիշտ հիմնավորված: Դաստիարակից պահանջվում է նրբանկատություն, քաղաքավարություն և մեծ համբերություն յուրաքանչյուր հանդիպման ժամանակ:
Կատարված դիտումների, զրույցների, հարցուպատասխանի և այլ բնույթի խոսակցությունների միջոցով դաստիարակն, անհրաժեշտ տեղեկություններ ստանալով երեխայի մասին, ավելի լավ է ճանաչում նրա ընտանիքը և ավելի արդյունավետ միջոցներ ընտրում նրանց հետ համագործակցելու համար:
Ընտանիքում տեղի ունեցող զրույցի բովանդակությունը ընտրվում է ըստ երեխայի տարիքի:

Առանձին ծնողներ կամ ընտանիքի այլ անդամներ մանկապրտեզ են հրավիրվում նրա համար, որպեսզի ավելի համոզիչ ու դիտողականորեն նրանց ցույց տրվեն իրենց երեխայի վարքի որոշ առանձնահատկություններ և դահմանվեն մանկավարժական ներգործության միասնական ուղիներ:
Հաշվի առնելով երեխայի դաստիարակությունը և կյանքի պայմանները, առանձին ընտանիքներում եղած դժվարությունները և թույլ տրված սխալները՝ մանկավարժը կազմում է որոշակի թեմային նվիրված խորհուրդներ և հանձնարարականներ՝ գրքույկ-հիշեցում: Օրինակ, ինչպես դաստիարակել աշխատասիրություն, քաղաքավարություն, բնավորության կամային հատկություններ, ինչպես բնավորության կամային հատկություններ, ինչպես օգտագործել գիրքը, ինչպես հարստացնել երեխայի ինքնուրույն խաղերի բովանդակությունը և այլն: Ծնողներին կոնկրետ օգնելու նպատակով դաստիարակության որևէ հիմնահարց մանրամասն պարզաբանող նյութերը կարելի է ձևավորել հատուկ թղթապանակում, որը որոշ ժամանակ տրվում է ընտանիքին:Ընտանիքի հետ անհատական աշխատանքի բազմազան ձևերի խելացի ընտրությունը, դրանց զուգակցումն ու իրականացումը հնարավորություն է տալիս վերհանելու ընտանեկան դաստիարակության դրական փորձը, որը ենթադրում է հետագա առավել խորը ուսումնասիրության նպատակով:

Ընտանիքի կոլեկտիվ աշխատանքի ձևերից են նաև ծնողական ընդհանուր և խմբակային ժողովները, կոնսուլտացիաները, կոնֆերանսները, կազմակերպվող երեկույթները և այլն:
Ծնողների հետ տարվող աշխատանքում առավել գործնական նշանակություն է ձեռք բերվում դիտողական պարագաներին համալիր օգտագործումը:

Քանի-որ ընտանիքի դերը մեծ է երեխաների հուզակամային մթնոլորտի դաստիարակության գործում,ապա ես մշտականկապ եմ հաստատում խմբի ծնողների հետ;Նրանց տեղեկացնում մանկապարտեզում իրականցվող կրթադաստիարակչական աշխատանքներին,լուսավորում եմ մանկավարժական գիտելիքներով,կազմակերպու եմ ծնողական ժողովներ,որտեղ քննարկվում են սաների դաստիարակության խնդիրների հետ կապված հարցեր:Ծնողների հետ համագործակցելով կարողանում ենք լուծել այնպիսի խնդիրներ,ինչպիսիք են՝ ագրեսիվությունը,կամակորությունը:Քանի-որ ծնողների ևսաների միջևկա հոգեբանական և հուզական կապ,ապա ծնողների հետ միասին կարողանում ենք լուծել նմանատիպ հարցեր:
Առավոտյան ժամերին ծնողների կողմից առաջ են բերվում հարցեր,որոնք լուծվում են շաբաթվա ընթացքում: Օրվա II կեսին,ծնողներին տեղեկացնում եմ սաների կատարած գործողությունների մասին և միասին փորձում ենք հարթել բացսականը: Այս ամենից հետևությու,որ ընտանիքի դերը երխայի հուզակամային մթնոլորտի զարգացման գործում:

Եզրակացություն

Ուսումնասիրելով վերը նշված թեման, եկա այն եզրակացության, որ ընտանիքի դերը երեխայի կյանքում հատկապես հուզակամային ոլորտների ձևավորման գործում դաստիարակության և զարգացման հարցում միակ և անկրկնելի դերն ունի, որտեղ պետք է մեծ պատասխանատվությամբ վերաբերվեն երեխայի դաստիարակությանը, քանի որ ընտանիքը համարվում է առաջին սոցիալակն միջավայրը, որտեղ ծնվում, ապրում և մեծանում է երեխան: Շատ կարևոր է ծնողների վերաբերմունը երեխայի նկատմամբ: Երեխան դեռ մոր արգանդում զգում է ծնողի վերաբերմունքը: Որպեսզի երեխան մեծանա լիարժեք առողջ թե ֆիզիկապես, թե հոգեպես ծնողները պետք է ճիշտ դաստիարակեն և որկու ծնողները ՝ հայրիկը և մայիրիկը մասնակցեն երեխայի դաստիարակությանը: Դաստիարակը երեխային նույնպես դաստիարակում է և ուսում է տալիս: Ծնողի և դաստիարկաի համագործակցությունը լիարժեք դաստիարակություն կարող է համարվել:

Գրականություն

Նախադպրոցական մանկավարժություն 2008թ. Ս.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան
Ուսումնական ձեռնարկ Մանկապրտեզի համար 2010թ. Հասմիկ Միտոյան Լալա Սմբատյան
Նախադպրոցական մանկավարժություն 1992թ.
Համացանց